

ՀԱՍՏԻ


Rédaction du Journal Arménien

"ARCHALOUYCE"

Hotel d'Arménie S. BuIbulian

(Egypte)

LE CAIRE



ԱՐՁԱՍՏԱՆ. ԳՐԱԿԱՆ. ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱԹԵՐԹ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՏԱՐԹԻ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴՊՐՈԹԻՒՆ

—*—

ԼՊԻՊՅՈՍ

Տարեկան 40 Եգ. ոպ

Վեցամսայ 20

ԱՐՏԱՍՏԱՆ

Տարեկան 12 Եր

Ապառիկ բաժանարարութիւն չի՝
ընդունուի :

Ծանուցումները մասնաւոր պայմաններով կ'ընդունուին :

Զեռագիրները եւ չեն տրուի :

Թ. Ի. Ի. 5	ՏՆՕՐԷՆ. - ԽՄԲԱԳԻՐ ԵՂ. Ի. ՇԷ. ԹՈՐՈՍՏԱՆ	Արտակազ Եգիպտական	Կառավարութեան	Վ. ՈՐՁՈՒԹԵԱՆ ԳՈՆԶԱՊԻՏ Ս. ԳՐԱԿԱՆՆԵՐ	Թ. Ի. Ի. 5
------------	--	-------------------	---------------	---------------------------------------	------------

ԵԿԵՂԵՑԻՆ

ԵՒ
ՍԵՐ ԲԱՐՔԵՐՈՒ ԱԶՆՈՒՍՑՈՒՄԸ

Մամուլի պարտականութիւն է, իբր քանոն ուղղել մարդկային բարքերու գիծը, իբր արդուկ յարգարել անհատներու՝ աւելի համայնքներու բարոյական փոթորուքները :

Մամուլէն առաջ՝ հասարակական այդ շինարար գերը կը կատարէր եկեղեցին բանիւ և գործով աւելի ողջմտութեամբ կամ բղջիխոնութեամբ : Ու մենք կը հաւատանք որ Մամուլի հետ եկեղեցիի գերն ալ տակաւին վերջացած չէ ու թերևս շարունակուի գարեբ, նրա ձևակերպութիւնները անցնելով զանազան ժողովներէ և փոխերէ : Թէև տեղ տեղ հասարակական բարքերից կերևի որ եկեղեցիսիրութիւնը սկսեր է տեղի տալ և սակայն ես կը խորհիմ որ՝ տակաւին մարդիկ պէտք ունին հոգեկան մտորանումներու և բարոյական հանգստի : Ասոր համար կ'արժէ հոս վերջիչել հանգուցեալ Գրեգոր Օտեանի իր Փարիզ և Լոնտոն մէկ գեղեցիկ բարդատական նկարագրութեան մէջ, որ կ'ըսէ : « Փարիզ եկեղեցի երթալը ամօթ է, իսկ Լոնտոն չ'երթալը, իմ կարծիքով մենք չ'պէտք է որդեգրենք ֆրանսական Աքիլիսութիւնը, (անաստուածութիւն) սակայն կ'լատթոնի նման աւետարան կարգացող մ'ալ մենք ունենալու համար, պէտք է մեր եկեղեցին ալ գիտնայ ի հարկին քիչ շատ ժամանակին յարմարիլ և նորագոյն գարուս ընդառաջել :

Գաւառացիները այն համոզումը ունին որ արտասահմանի հայը առհասարակ անկրօն կը դառնայ, ինչպէս առհասարակ ֆրանսա չի տեսնողը, չի ճանցողը շատ անգամ տարօրինակ և չափազանց արտառոց գաղափարներ կունենայ ֆրանսական ընտանեկան նիստ ու կացի և առհասարակ նրա հաւատալիքներու և դաւանանքի մասին : Եւ այսպէսով՝ կը խեղաթիւրեն շատ պարզամիտներու վճիռ գաղափարը, այն յոյժ քաղաքակրթութեան կեդրոնական վառարանի մասին, որ կրթութեան տեսակէտով մեր ամենուս հայրե-

նիքն է : Ինչպէս բանաստեղծը ըսած է, « ալէն մարդ ունի երկու հայրենիք. նախ իր ճննդավայրը և երկրորդ ֆրանսա . . . »

Խօսելով առ այժմ, միայն մեր եկեղեցւոյ մասին կարող ենք վրաստահաբար ըսել, որ հայը՝ չ'ըսեմ անհաւատ, աւելի անպարտաճանաչ է դէպի իւր Մայրենի եկեղեցին բուն երկրին մէջ :

Երկրէն դուրս նա աւելի հոգւով սրտով փարած է՝ եթէ ո'չ դպրոցին, որքան եկեղեցւոյն : Ասոր պարզ ապացոյցները մենք անձամբ տեսած ու հաստատած ենք ամենաքաղաքակրթ վայրերու՝ Մոսկուայի, Ս. Քէթէրսպուրկի և Փարիզի մէջ հայոց եկեղեցւոյն թիւերը, ուրտեղ պարզ վճիռ ճաշակի հետ կը տիրէ խորին կարգապահութիւնը և իմաստուն կարգադրութիւններ : Ասոնց կարգին Գահիրէի Հայոց եկեղեցին ալ ամէն կիրակի և տօն օրերուն նեղ կուգայ Գահիրէական եկեղեցւոյ սէր երկսեռ հասարակութեան : Ու իսկպէս Գահիրէի նման տաք երկրի մը մէջ, ուր մարդկային ներքին բարոյական քանդող տարաւերտ տարրերը կը վխտան : Լաւագոյն է անշուշտ որ դէթ կիրակիի կիրակի, քիչ մը փոխուի հոգեպէս և փոխանակ առաւօտեան կանուխ, ինքզինք գտնելու թէմպէքի մուտով թխպացած, նեխած սրճարանի մը թնոյրտում, մտնել եկեղեցին, բազմիլ փառաւոր, մաքուր ներկուած նստարան - թիկնաթոռների վրայ և վայելել հոգեկան զմայլանքի և մտորանումների ինքնամոլորման հաճոյքը . . .

Ցանկալի էր որ եկեղեցիներու այս նոր ձևի գահաւորումը որդեգրէին նաև բուն Հայաստանի գոնէ կարող, եկեղեցիները : Դժբաղդաբար այն կողմերը տակաւին միջնադարեան մտածումով եկեղեցին տաքընելը, նստարան - աթոռների գրութիւնը, և նոյն իսկ պատարագի հետ երգեհոնի մասնակցութիւնը կը համարուի կռապաշտութիւն և ամենածանր հայհոյանք Հոգւոյն Սրբոյ գէմ :

Հայաստանի շատ մը խոշոր եկեղեցիներու կարգ ու սարքը՝ մինչև այսօր ալ, կարծես մահախեղութեան ազդեցութեան տակ, շատ չի տարբերիլ թուրքական մըզ-

կիթներէն և նոյն իսկ մեր հայ շերմեռանդ ծերունիներու աղօթելակիրպըն ու ծալապատիկ նիստ ու կացըն շատ հեռու չեն թուրքական և նամազէն :

Ուրախ ենք յայտնելու, քանի որ Գահիրէի Պէնի Սուրէնի Ս. Աստուածածին եկեղեցին, շնորհիւ քաղաքակրթութեան, բնէք ինքզինքը ազատած կը համարի միջնադարեան կաշկանդումներէն և յուսալի է որ՝ Գահիրէ ևս հետևելով Փարիզի և Աղեքսանդրիոյ, իւր եկեղեցւոյ գըլխաւոր շահերը և մոմակալ - աշտանակները պիտի փոխէ ելքարական փառաւոր երկնաբան լուսազարդութեան : Մեզ կը մնայ հոս՝ թէև քիչ մը ուշ, բայց լաւ է անագանքան բնաւ, անդարդառնալ եկեղեցական եթէ ո'չ դաւանանքի, դէթ առ այժմ աչք ծակող մի քանի վարչական թերութիւններու մասին :

Այդ թերութիւններէն առաջինը այն է որ ճննդեան և նման մեծ տօներուն երբ չափազանց մեծ բազմութիւն կը լեցուի եկեղեցին, ինչպէս ամենուրեք ըստ հայկական տրիսուր սովորութեան դժբաղդաբար բազմալի կարգապահութիւնը չի տիրէ մեր եկեղեցիներու մէջ : Եւ այդ հանդիսաւոր օրերին՝ տեսանք շատ յարգելի տիկիներ և օրիորդներ ժամերով ստիպուած էին ստիպասել և շատ անգամ՝ բողբոջին անվայել շարժումներով հրուիլ : հրմշկուիլ այս ու այն կողմի ծովացած բազմութեան մը :

Իրաւ է թէ՛ Գահիրէի եկեղեցին գնալով փոքր կուգայ հայկական այս խոշոր գաղութի եկեղեցւոյն հասարակութեան և սակայն շատ իրաւացի գիտել տուողներ եկեղեցիի վերջի մասին մէջ հանգստաւոր տեղ բռնել, մինչդեռ առաջինը բաց տեղեր մնալով հանգեռմ, նորեկները կը մնան ստի վրայ և անհանգիստ :

Գահիրէի եկեղեցւոյ երկրորդ ալքի զարնող պակասութիւնը կարելի է համարել այդ մարդոց եկեղեցիի մէջ մինչև վերջ իրենց փաթ-

ԳԱՐՅՆ ՈՒ ՇՐՔՅՍ

Օր մը շիրիմն ըսաւ վարդին՝
Արցունքներդ ինչ իր պարզին.
Սիրասնը ինչ հոգիներուն,
Գեղամպիս ծաղիկն էս յուն :

— Պատասխանեց վարդը ֆեմոջ՝
Նազակտի մը յոյժ մեղանուջ.
— Տրտաւարտու մի ինչ դաւաճան՝
Երբոր իջնայ մտքը գիշերուան՝
Արցունքներդ այս ցոյսարայ
Կը շինեմ էս մի փայտը բոյր :

Իսկ դու ի՞նչ ես ո՞վ ցուրտ դաւաճան
Մրուրիւնով խոր, մշտական .
— Ա՛ն, չքնաղ վարդ յարեց դաւաճան
Հոգիներն այն՝ որ պահուցան
Խորհերուս մեջն իմ անյասակ,
Կը շինեմ էս երկինց հրեշտակ :

Թարգիլ. Յրաւս Թ. Հ. ԹԸԳԸՐԵԱՆ

Թոշակուր գլխարկներով կամ առհասարակ կոկոզուր թէք ֆէստրով մնալին, Պարզ ազգաբարոյութիւն մը կը բաւէ, որ Գահիրէի զարգացած հասարակութիւնը յարգէ քաղաքակրթութեան և տարրական քաղաքավարութեան կանոնը եկեղեցւոյ՝ ինչպէս նաև շատ հասարակական վայրերու մէջ, գլխաբաց մնալու :

Հայաստանի ցուրտ երկրներու մէջ ժողովուրդը կ'առարկէ, որ հարբուխէ չի բռնուելու համար, ստիպուած է գլխարկը գլուխը պահել, թէև բժիշկները զուր տեղ հաստատած ըլլան թէ՛ հարբուխը կուգայ աւելի ոտքերու պաղէն՝ և ո'չ թէ գլխի բաց պահելէն : Գահիրէիք ալ թերևս առարկեն՝ որ լաւ ֆէստերնիս հանենք, բայց ո՛ր դնենք երբ տեղ չ'կայ : մինչև վերջ ձեռքերնիս չի պիտի պահենք ա՛ . . .

Այդ մասին ալ ես կը խորհիմ որ գործը կը ծանրանայ պատահաբար թեման վրայ, որ ժողովրդի արդար պահանջին գոհացում տալու համար կրնայ նստարան-թիկնաթոռներու ետևէն յաւելուածներ գնել, և գլխարկներու և գաւազանները զետեղելու համար :

Հայաստանեայց եկեղեցւոյ մէկ ընդհանուր աչք ծակող պակասութիւնն է յաւիտենական պնակներու չնկնկոյը : այն ալ ճիշդ այն բնույթն է, երբ շերմեռանդ աղօթաւորը

Ճանկի եկած կ'աղօթէ :

Իրաւ է թէ նորութիւն մը չէ՛ մեր այս տրտունջը եկեղեցական այս կրօնային մտաբանութեան ղեկավարը կարծեմ թէ Գահիրէի եկեղեցին իւր բարեյաջող միջոցներով կրնար վերջ տալ այս գունաւոր պիտակներու շարանին և միայն աղքատախնամին թողուլ եկեղեցւոյ դուռը, որ ուզողը կարենայ բաժին հանել Ազգ. Աղքատախնամի սնուկին :

Ատկից զատ՝ ա՛յլ ալ խնդիր է որ Աղքատախնամը, արդեօք հնարաւորութիւն չունի՞ աւելի ուրիշ պատուարներ միջոցներով գոցել իր պիտակները՝ քան եկեղեցական այդ «կլապիտ պիտակներով» : Երբ կը մտածուի մանաւանդ որ քահանաները՝ ուժեղակաւ են և անկից զատ ըստ օրինի կը վարձատրուին նաև ժողովրդէն :

Մենք կը խորհինք որ այս տեսակ միջոցառնանք գաղութներու համար մանաւանդ՝ դպրոցէն ու Մամուլէն աւելի եկեղեցին է որ պիտի կրթէ ու քիչ մը արդուի հասարակական բարքերը : ու կարծեմ այն վայրերի մէջ, ուր մարդոց սիրտը ճմլող հայկական հարստահարութեան ու ճնշման դէպքեր չկան, կ'արժէ և ժամանակն է որ գոնէ վարչային նոր ռեժիմներ մտցուին հայ եկեղեցւոյ մէջ, որ հասակաւորներու դպրոց լինելու հանդերձալ է :

Այս ձևական ռեժիմներն են, որ աւելի՛ զգալի պիտի դարձնեն հոգեկան պահանջները և եկեղեցւոյ բարոյական պարտականութիւնները գործադրուի և բարքերի տղնուացումը :

Գահիրէ ՄԻՍԱԲ ԽԱՐՍԻԱՆԵԱՆ

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Զ Ե Կ Ո Յ Ց

Արշալոյս ի վերաբերեալ ա մէն նիւթական գործողութիւններ պիտի կատարուին փոխան ստացականներու, որոնք անպայման պէտք է ստորագրուած ըլլան վարչութեան Գանձապետ Մեծ. Տիար Սարգիս Պիւլպիւլեանի կողմէ, և խմբագրութեան կնիքը պէտք է կրին :

Հակառակ պարագային՝ ո՛ր և է ստացական անվաւեր կը նկատուի :

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ
ՃԻՆԴԵԼՄԵՆԸ
Կ Ա Մ
ՏԻՊԱՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

«Ճէնդըմէն» բառը անգլիներէն բառ մըն է, որուն ճիշդ թարգմանութիւնը «աղջիւ մարդ» կամ «ազնուական» կը նշանակէ : Ուրիշ որ և է լեզուի մը մէջ այս բառին համապատասխանող կամ անոր բուն նշանակութիւնը արտայայտող բառ մը չ'կայ : Հետեւաբար այս բառը մուտք գտած է և յաճախ կը գործածուի շատ մը լեզուներու մէջ :

Այս բառը այնչափ անզուգական և խորհրդաւոր նշանակութիւն մը ունի որ գրեթէ ամէն լեզուի մէջ սովորութիւն եղած է անոր բառական թարգմանութեան

չէն վազ անցնելով, անոր իմաստը լաւագոյն կերպով արտայայտող քանի մը բառերը մէկտեղ գործածել, կամ զայն թարգմանելէն աւելի բացատրել : Գահիրէի մէջ թերեւս զայն լաւագոյն արտայայտող բացատրութիւնը հետեւեալն է, Homme comme il faut, որ մեր ոճովը «չնորհրով մարդ» կը նշանակէ : Մինչդեռ ձեռնարկէն բառին մէջ խտացած են չնորհր. ազնուութեան և կատարելութեան գաղափարները :

Հետ իս հայերէնի մէջ անոր իմաստը աւելի լաւ կ'արտայայտէ «տիպար մարդը» : Թէպէտեւ այս ալ քիչ մը կը չափազանցէ անոր բուն իմաստը :

Մեր արդի պարագային յարմարցնելով՝ ևս մարդ բառին տեղ պիտի գործածենք երիտասարդ բառը և ըստ կարողութեանս պիտի ջանամ ցուցնելու թէ ի՞նչ բարեմասնութիւններով օժտուած ըլլալ պէտք է ձեռնարկէն մը կամ տիպար երիտասարդ մը, և ի՞նչ միջոցներով մենք կրնանք իրական ձեռնարկներ ըլլալ :

Կուզեմ համառօտակի խօսիլ երեք զլխաւոր կէտերու վրայ, թէպէտեւ անոնց իւրաքանչիւրը կրնային զատ զատ բանախօսութեան նիւթ ըլլալ, թէպէտ և անոնք ձեզի արդէն ծանօթ կէտեր են, և ես կուզեմ միայն այս առթիւ զանոնք կրկին շեշտել և իմ տեսութիւններս յայտնել իրեն և իմ վերջին յիշատակաւ բաժնուէս առաջ, Ե. Բ. Ընկ. թեան յարգելի անդամներուն :

Ձեռնարկէն մը կամ տիպար երիտասարդ մը ըլլալու համար անհրաժեշտ կը գտնուի հետեւեալ երեք պայմաններու իրագործումը :

- 1. Առողջ մարմին մը,
- 2. Մշակեալ միտք մը՝ և՛
- 3. Ազնիւ հոգի մը ունենալ :

Ա .

Առողջ մարմին մը ունենալ .

Հարկ չկայ իսկ կրկնելու այն հանրածանօթ ճշմարտութիւնը թէ՛ «Առողջ միտք մը միայն առողջ մարմնով մը մէջ կը գտնուի, և առողջ հոգի մը առողջ և զարգացած մտքի մը մէջ .» Առանց ֆիզիքական կորովի և կատարելութեան անբնական է մտաւորական և հոգեւորական կատարելութիւն յուսալ : Հետեւաբար ֆիզիքականը՝ հիմը կը կազմէ մտաւորականին և հոգեւորականին :

Բնականաբար առաջին անգամ մեր միտքը կուգայ ժառանգականութեան խնդիրը որ մասամբ կը սահմանափակէ մեր կամքը և կարողութիւնը : Մարդը իր կամքովը չէ որ առողջ կամ ապառողջ կը ծնի : Ուրեմն ի՞նչ պիտի ըսենք անոնց՝ որոնք իրենց ծնողքէն վերտ առողջութիւն մը ժառանգած են : Յիշաւի խիստ ցաւալի են այսպիսի դէպքերը և ընդհակառակը մեծ շնորհք մը և Աստուածային պարգեւ մըն է առողջ մարմին մը ժառանգած ըլլալ : Բայց այսու հանդերձ այս բաները չեն արգելիլ երիտասարդ մը իր լաւագոյն ընելէ և ըլլալէ : Եթէ մենք կրճատե՞ք արգելիլ կամ դարձեցնել այն բաները որ մեր առողջութիւնը ա՛յլ աւելի կը վաւթարացնեն, և եթէ կրնանք իր ազդեցիկ այն միջոցները որոնցով կրնանք պահել և անոնցմէ մեր առողջութիւնը, կատարած և կրկնաբար մեր պարտակ անութիւնը և բաւական մեծ քայլ մը առած կ'ըլլանք զէպի տիպար երիտասարդութիւնը :

Կուզեմ յիշել քանի մը բաներ՝ որոնք կ'սպասան մեր առողջութեան իջ :

- 1. Մոռալութիւն . - Շարժումը ըմբռնութեան խիստ կարեւոր երեւոյթներէն մէկըն է : Անիկա կենդանութեան և զգացման նշան է : Բոլոր անկենդան բաները անշարժ են : Կենդանի էակն իր

իրենց ծուլութեան և դանդաղութեան աստիճանին իրենք զիրենք անգործունէութեան և անկենդանութեան կը դատապարտեն :

Այն որ կը գործէ կը մեծնայ և կը զարգանայ : Մեր այն անդամը՝ զոր աւելի կը գործածենք աւելի կը մեծնայ և կը զօրանայ քան միւսները : Այս պատճառաւ է որ երկաթադորները կը կաթի պէս ալ ձեռքեր կ'ունենան : Մինչդեռ եթէ անոնք ալ առեն մը գործելէ դադրին, իրենց մկանունքները կը թուլան և տակաւ առ տակաւ կը կորսնցընեն իրենց ունեցած ուժը և կորովը :

Արդարեւ շատ անգամ ծոյլեր կը գիրնան և ճարպային նիւթերու ճեփօ մը կը կազմեն իրենց մորթին տակ, բայց ուժը կը պակսի : Անոնք կուտեն և չեն մարսեր : Մոռալութիւնն որ շատ անգամ դժուարամարտութեան շարժախառն է ալ ինչ հիւանդութիւններէ կը տառապին, ինչ որ չի վայելի տիպար երիտասարդի մը :

2. Պեճ կեղծիւն ինչ մը շուս ուտել :

Ապրելու համար ուտելը անհրաժեշտ է և առողջ մտաւոր համար պէտք է չափաւոր ուտել : Երբ ստամոքսին մէջ պէտք եղածէն պակաս կերակուր ընդունուի և կամ մեծ քանակութեամբ անուշաքիտ կերակուր քիչ սնունդ պարունակէ, թէ՛ ստամոքսը կը տկարանայ և թէ՛ մարմինը պէտք եղած վառելանիւթէն կամ սնունդէն զրկուելով կ'ստիպուի իր մէջը գտնուած ճարպային նիւթերը սպառելով լեցնելու այդ պակասը, որուն հետեւանք կ'ըլլայ քնկանաբար տկարութիւն և հիւանդութիւն :

Շատակերութիւնը կամ որկրամուտութիւնն ալ նոյնչափ և աւելի վնասակար է առողջութեան : Անոր ենթական ուշ կամ կանուխ ստամոքսի խանգարումէն կը տառապի : Մեծ մարդ մը ըսեր է . «որկրամուտները բուն իսկ իրենց ակոսներովը կը փորեն իրենց գերեզմանները» :

Անոնք շատ ուտելով, շատ սնունդ չեն կրնար առնել, ընդհակառակը անոնք մարսել չ'կարենալու չափ շատ կուտեն և չ'մարսուած կերակուրէն իրենց պէտք եղած սնունդն իսկ չեն կրնար առնել :

Չի կարծենք որ ճոխ կերակուրները միայն առողջարար և անհրաժար են :

Երբեմն աղքատին կերած չոր հացը հարուստին կերած ճոխ կերակուրներէն աւելի առողջարար է :

Վստահ կրնաք ըլլալ թէ՛ արարական սեւ հացը իր մէջը պարունակելով ցորենին թեփերը՝ աւելի սննդարար է քան եւրոպական ըսուած հացերը :

Անոնց կերած ֆուրը պակաս սնունդ չի պարունակէր քան միսը :

Կան կերակուրներ՝ որոնք սնունդ տալէ աւելի ստամոքսը լեցնելու և ծանրաբեռնելու կը ծառայեն : Պէտք է ընտրել ըստ կարի սննդարար կերակուրներ և զանոնք ուտել չափաւոր կերպով : «Ապրելու համար ուտել պէտք է և ո՛չ թէ ուտելու համար սպրիլ» :

3. Մանր աշխատութիւն . - Չափաւոր աշխատութիւնը առողջութեան զլխաւոր պայմաններէն մին է, բայց ծանր աշխատութիւնը վնասակար է :

Մարմինը իր գործունէութեան աստիճանին տաքութիւն կամ ուժ կ'սպասուէ, զոր կը հայթայթէ ամէն օր իր ընդունած կերակուրէն :

Մարդուն ուժը չափ ու սահման մը ունի : այնպէս որ եթէ աշխատութիւնը իր չափը անցնի մարմինը կը տուժէ և կ'ստիպուի իր ուժի դրամազուլիս սպասելու : Պէտք է որ աշխատութիւնը չափաւոր ըլլայ : Անոնք որ անձնական գործ չունին և ուրիշներու տրամադրութեան տակ ըլլալով ենթարկուած են

ծանր աշխատութեան, գոնէ կրնան արթուն կենալ և առաջին առթիւն օգտուիլ լաւագոյն գործ մը գտնելու համար :

(Շար .) Ն . ԿԻԻՉԵԼԻՄԵԱՆ

ՉԵԿՈՒՅՈՒՄ

Պեճ է ինկուսի ունենալ թէ՛ Արշալոյս ի քաճանորիս արքայազնուհի հրատարակուած ստացականները, զորս պիտի ստորագրէ Մեծ. Տիար Սարգիս Պիւլպիւլեան, 1401 թիւն կուսիս, և այդ թիւն շտապ եղող ո՛րեք ստացական արժեք ունենայէ զորս է քաջարձակապէս :

ՇԱՐՔՈՒԱՆ ՆՕՐԵՐ

— 0 —

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Անցեալ թուով մէկ հեռագիրը կը հրատարակէինք էգօ էժիքսիսի, որուն թղթակիցը կ'ըսէր թէ՛ հեռագիրս տակաւին ձեզի չի հասած, Հայկական Բարենորոգման հարցը կարգադրուած պիտի ըլլայ :

Եւ սակայն այդպէս չեղաւ : Այս շաբթու Աշ-Ահրաւի մասնաւոր թղթակիցը, քիչ մը բարեփոխելով Բարենորոգման խնդիրը՝ հետեւեալ նոր ծանօթութիւնները կուտայ :

«Բարենորոգումներու հարցը կ'ըսէ, վերջնականապէս կարգադրուած է կառավարութեան կողմէ, բայց խիստ ծածուկ կը պահուի կոր : (Ինչպէս կ'երևի՝ երես ելլելու արժանի բան մը չէ՛ որ «խիստ ծածուկ կը պահուի կոր» : Մ. Խ.)

Միւս կողմէ՛ կառավարութեան տուած որոշումը, կ'ըսէ ծածկագէտ քղրակիցը, հետեւեալ գծերուն մէջ կարելի է ամփոփել :

«Անատուրի բոլոր նահանգները պիտի ստորաբաժանուին :

«Ռուս կառավարութիւնը ինք պիտի անուանէ Ընդհանուր Տեսուչները :

«Տեսուչները իրաւունք պիտի ունենան ստորագրուած պաշտօնեաները հրատարակելու և անոնց տեղ նորեր ընտրելու պէտքը զգացնելու, բայց վալիները կախում պիտի ունենան թուրք նախարարութեանէն :

«Բիւրո հեծլազորքէն հինգ զօրաբաժիններ պահեստի գունդերու պիտի վերածուին :

«Կառավարութեան յայտարարութիւնները տեղաբնակներուն մեծամասնութեան լեզուովը պիտի հրատարակուին : այսինքն եթէ հայերը թուով շատ են՝ հայերէն, իսկ եթէ քիչ են՝ ռուսականաբար թուրքերէն : Եւ սակայն հայերն ալ պիտի կարենան իրենց լեզուովը խնդրագիրներ մատուցանել :

«Այս սրբուժմը գործադրութեան գրուելէն տարի մը յետոյ, մարդահամարի գործողութեան պիտի ձեռնարկէ կառավարութիւնը և

նահանգային վարչական ժողովները պիտի կազմուին համեմատական ներկայացուցիչներով :

Եթէ հեռագիրներուն տուած տեղութիւնները ստոյգ են, Անատոլի մէջ (իմա՛ Հայաստանի) մտցուելիք այս բարենորոգումներու որոշումը մեծ պետութիւններուն ալ ծանուցուած է : Յնձացէ՛ք և ուրախ լերուք . . . :

Թուրք կառավարութեան այս վերելի որոշումները սակայն գրգռած է մեր թուրք հայրենակիցներուն դիւրազգածութիւնը՝ ինչ որ անբընական չէ, և մէկ քանի տեղեր ըսկրած են այոյօթ հռչակել հայերուն դէմ . այս պատճառաւ Անատոլի Հայկական նահանգներուն մէջ կացութիւնը օր ըստ օրէ կը վատթարանայ :

Գալով Մէկսուսական ընտրութեանց մէջ հայերու ձեռնպահութեան շարժումին, թուրք քաղաքական կառավարութիւնները դատապարտելի կը գտնեն, որ հայերը այդ տեսակ յանդուգն քայլեր ընելով՝ անհնազանդութեանց ապացոյցներ կուտան այսպէս թեքուելով թուրք կուսակցութեանց հիանալի որոշումներուն դէմ . . . երջանիկ երկիր :

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Աղէքսանդրիոյ և Գաւառներու համար գործակալներու պէտքը կայ . փափաքողները կրնան գիմել Արշալոյսի խմբագրութեան հասցէին :

Ա.Ձ.Գ.Ա.ՅԻՆ

ՎԵՐԱԴԱՐՁ

Եւրոպայի մէջ գործող Հայկական Պատուրակութեան նախագահ նորին Վսեմութիւն Պօղոս փաշա նուպար՝ քանի մը օրէն քաղաքս կ'սպասուի :

Թէ՛ Աղէքսանդրիոյ և թէ՛ Գաւառի մէջ պատրաստութիւններ կը տեսնուէին թէ՛ և՛ փառաւոր ընդունելութիւն մը և ժողովրդային համակրական ցոյցեր կազմակերպելու, սակայն՝ կ'ըսուի թէ՛ ն . Վսեմութիւնը փափաք յայտնած է որ ժողովուրդը նմանօրինակ հրապարակային ցոյցերէ զբուշանայ, ու այնպէս ալ եղած է :

Արդարեւ առիթներ չի՛ պիտի պակսին մեզի որ մեր սիրեցեալ փաշային երախտագիտական արտայայտութիւններ ընենք . Եւրոպայի մէջ Հայկական դատին ինպատար ևր կատարած գիւանակիտական խրկախուձներուն համար :

ԱՌԱՋՆՈՐԴ

Աւրախ ենք ծանուցանելու որ մեր նախորդ թուով եզրկատարաց առաջնորդցութիւն համար ըրած առաջարկը, Ամենապատիւ Դուրեան Սրբազանի նկատմամբ, լաւ ընդունելութիւն գտած է մեր ազգայիններէն շատերուն մօտ՝ և եզրկատարացը կը պատրաստուին երեսփոխան

ժողովոյ հաւաքական խնդրագիր մը մատուցանել, Դուրեան Սրբազանը եզրկատար առաջնորդ ընտրելու համար :

Իրաւ որ եզրկատարացը չ'պիտի խաբուած ըլլան իրենց այս որոշումին մէջ, որովհետեւ ընտրութիւններուն լաւագոյնն է որ պիտի ընեն, և նոյն իսկ պիտի գնահատուին իրենց այս ընտրելագէտ ժեսութիւն համար :

ՏԱՐՈՆ-ՍԱՍՈՒՆ

Անցեալ օր պատիւը ունեցանք ծանօթանալու Մուշի Առաջնորդ Գերապ . Տէր ներսէս եպիսկոպոս Խարախանեանի եղբոր՝ Տիար Միսաք Խարախանեանին հետ :

Տիար Մ . Խարախանեան իբր Գիւղատնտես-Ուսուցիչ հոս եկած է Հ. Բ. Ընդհ. Միութեան գործնական ծրագիր մը ներկայացնելու, որպէս զի Սշոյ Ս. Առաքելոց վանքին որբանոցը գիւղատնտեսական տարրական արհեստանոցի մը վերածուի :

Այսպիսի ազգօգուտ ձեռնարկի մը յաջողութիւնը՝ որ Տարօն-Սասունի թշուառ որբերուն ապագային հետ գործ ունի, փափաքելի էր որ Հ. Բ. Ընդհ. Միութեան լուրջ ուշադրութեանը արժանանար :

Կ'ըսուի նաև թէ՛ Միութիւնը իր ատենապետ փաշային վերագործէն յետոյ, պիտի զբաղուի այդ կարևոր հարցով :

ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ

Մեր ընթերցողները կը յիշեն անշուշտ թէ՛ անցեալ տարուոյ Հոկտեմբերին 1000 օրինակ գիրքերու վիճակահանութիւն մը հրապարակ ելլաւ Հայկական Մամուլի Ընկերութեան անունով :

Յիշեալ տոներէն մաս մը առժամանակեայ կարգադիր Մամուլի միջոցաւ սպառած ըլլալով, տակաւին բաւական քանակութեամբ տոսա-աւելի քան 1200 հատ տեղը կը մնան և առժամեայ վարչութիւնն ալ կազմաւորուած է, մեկնմամբ և այլ պատճառներով :

Իսկ այս տարի իրերայաջորդ պարբերական հանգանակութիւններ բարեօրինական ու շահասիրական անհամար ձեռնարկներ, հանդէսներ, թատրաններ և այլն և այլն, որոնք անշուշտ հայ ժողովուրդին քսակը թեթեւցնելով օրտեղը դառնացնելու ընդթ ունէին, արգելք եղան որ՝ այդ վիճակահանութեան տմսերը չըլնարութեան մէջ մնային և սպառելով վիճակահանութիւնը տեղի ունենար :

Արդ՝ կոչ կուզենք բոլոր Բարեօրինական Ընկերութիւններուն, և մանաւանդ Արաբկիրի Կրթասիրացին, որ եթէ արամագրութիւն ունին, հաճին բոնակցել թերթիս Տնօրէն Տիար Եղիշէ Թորոսեանի հետ, մնացեալ տմսերը իրենց ընկերութեան հաշուոյ սպառելու համաձայնութեան մը գալու համար :

ԲԻՆԻՏԻ ՓՈՆՍԻՅԷ

Բրէտի Փօնսի,էի այս երկուշաբթի օրուան, 16 Փետր. վիճակահանութեան Առաջին պարգևը

50,000 Ֆրանգ, շահած է Տ. Մարտիրոս Պէտրեան, որ դեռ վերջերս Բաղաքիս Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ ժամակոչի պաշտօնին կոչուած էր :

Տիար Պէտրեան՝ Արաբկիրի Մաշկերտ գիւղէն է. յաջողակ խոհարար մը, և որ ա.ելին է, ազգին բարօրութեան ցանկացող մը :

Յայտնի բան է որ՝ Տիար Պէտրեան, իր շահած պարգևէն կարևոր մաս մը ազգային յառաջդիմական գործոց կը յատկացնէ :

ՏԵՂԱԿԱՆ

ԴԵՊԻ ՊԵՐՈՒԹ

Բաղաքիս մէջ լուր տարածուած է թէ՛ ն. Բ. Խալիկի մօրեղբայրը, Բրէնս Հիւսէին փաշա Բամէլ պիտի ընդունի Ուրիոյ և Պէյրութի ընդհ. կառավարչի պաշտօնը՝ եթէ թուրք կառավարութիւնը զինք այդ պաշտօնին հրաւիրէ :

Ն. բարձրութիւնը՝ կ'ըսէ տեղական թերթ մը, շատ համակրած է Դամասկոսին և անոր բարօրութեանը ցանկացող մըն է և ի սրտէ պիտի ջանայ հոն տիրապետել տալու արդարութիւնը՝ որ ժողովուրդ մը դէպի երջանկութիւն առաջնորդելու և հարստացնելու միակ ազգակն է :

Ն. Բարձրութիւնը՝ կ'ըսէ նոյն թերթը, շատ լաւ ուսումնասիրած է այդ կողմերը. և վստահ է թէ՛ պիտի կրնայ բարեկարգել հոն տիրող անկարգութիւնները, այնպէս որ թէ ընկինքը և թէ՛ հոն պանդխտողները կատարեալ հանգիստ պիտի կրնան վայելել :

Միևնոյն թերթը կը յաւելու թէ՛ թուրքիոյ կառավարութիւնը ամենէն իմաստուն կարգադրութիւնը ըրած կ'ըլլայ, Հիւսէին փաշա Բամէլին պէս գերազանցօրէն ձեռնհաս մէկը այդ պաշտօնին կոչելով :

ԺԱՆ - ՏԱՐԳ

Յրանսական և Ժան - տ'Արք, զրահաւորը Աղէքսանդրիա հասած է, ուր երկու շաբաթի չափ պիտի մնայ : « Ժան Տարգի հրամանատարն է ծովակալ Գրէսսէ, տարողութիւնը 11,200 թօնօ է, և 28500 ձիու ուժ ունի :

ՉԲԲԱԿԱԼՈՒՄ

Զրոյց կը շրջի թէ՛ եզրկատարի կարևոր անձնաւորութիւն մը Պօլսէն հեռագիր մը ստացած է ձերբակալել տալու համար եզրկատարի պաշտօնատար մը :

Այս ձերբակալման պատճառները անձանթ կը մնան :

ՅՈՒՍԱԶԱՏ

Անցեալ օր այրի կին մը իր զաւակներուն տալու հաց չունենալուն համար յուսահատութեան անձնասպանութիւն փորձած է :

Թէև Ասիսիան ֆիւրիֆի կամաւորները զինքը հիւանդանոց փոխադրած են, բայց վիճակը յուսահատական է : Ու մտածել թէ՛ Ե-

գիպտոսի մէջ ազբատանամներ կը վխտան . . .

ՌԻՐԱՅԻՆ

Իտալացի գեղուհի մը՝ իր հայրենակիցներէն երիտասարդի մը սիրահարուած ըլլալով անոր հետ ամուսնանալ կուզէ՛ բայց ծնողքը կը հակառակին ու սրբալիտի մը մէջ կը փակեն զինքը :

Աղջիկը վերաւորուելով այս բերդարգելութենէն. ինքզինքը պատուահանէն վար նետելով անձնասպան կ'ըլլայ : Ահաւասիկ զօրաւոր բողոք մը, կեանքի կամք ու ուրբերուն գէմ . . .

ՀԵՌԱԳԻՐ

ՀՐԱՅԱՐՈՒՄՆԵՐ

Կ. Պոլիս 14 Փետր. — Հայոց Պատրիարխական վարչական ժողովը հրամարեցաւ, Ազգ. երեսփոխան ժողովէն և հայ մամուլէն ֆենաստուած յոյսաւրն հետեւանով՝ մեպուսական ղնտրութեանց և երուսաղէի գործերուն մէջ իր բունած ուղղութեան համար :

ԹՈՒՐԻԱ ԵՒ ԵՌԵՒԱՍՏԱՆ

Լոնսօն 17 Փետր. — Եգէական կղզիները Յունաստանի քողուելուն համար, Մեծ եպարքոսը համակերպութիւն յայտնած է. Այս յոժու մը այլ ևս վերջնական կը համարուի :

Մեծ եպարքոսը պետքեանց որոշումները յարգելու մասին Իրան փախաբ հաղորդէր է Դեսպաններուն, խնդրելով որ յայտնին համազել Յունաստանը, Իսախոյ գրաւած կիրներովը փոխանակելու Բիսուս ու Միսիլիին, անկէ հսկելու համար Փեթր Ասիոյ ծովեզերքին վրայ :

ՆՈՐ ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Արեւի 17 Փետր. — Պոլիսէն կը ծանուցանեն թէ՛ նոր դատարան թիւն մը երեսն եղեր է. Ազգի պէյ մերքախարէր, և 50 ազգանացի սպաներ ասիսիանագործ կողեր են :

ԿԸ ՓԵՏՈՒԹԻ

Արաբկիրի Մագ գիւղէն Պօղոս քահանայի որդին Յովհաննէս Զրաքեան 30 տարեկանի մօտ. միջանասակ գերուկ կազմով և սեւ աչուր, որ Օսմ. Սահմանադրութեան յետոյ, մեկնած է Բիրէա եւ անտի եզրկատար հայրենիքի մէջ թշուառ թողով մայր մը կինը, և երկու անչափաճա զաւակներ : Կը խնդրուի մեր արգոյ ազգայիններէն որ՝ եթէ յիշեալ անձին ուր ըլլալը գիտեն, ազգասիրաբար հաճին ծանուցանել հետեւեալ հասցէին :

ԵՐՈՒԱՆԴ ՄԻՐԻՉԱՆԵԱՆ

Պապ - էլ - Պապ Գահիրէ

Ա.Ձ.Դ

Բնիկ Սպարդացի (Գոնիա) Յարութիւն Ա. Զօփուրեան անուն երիտասարդը որ օսմ. բանակին մէջ զինուոր էր. Պալքանեան պատերազմի սկիզբէն ի վեր անյայտացած է. Կը խնդրուի ամէն անոնցմէ որոնք յիշեալին ողջ կամ մեռած ըլլալուն մասին տեղեկութիւն մը ունին հաճին իմացնել հետեւեալ հասցէին : H.T. Poste restante le Caire

T I R I N G

Թ Ի Ր Ի Ն Ք

ՊԱՎԱԲԻ ՓՈՂՈՑ ԼԱԻԿԻՆ ՓԱՍԲԱԼ

Վ. Ա. ՋԱՆՈՒԱՏԱՆ ԿԻՑ

ԵՂԱՆԱԿԻՆ ԵԱՐՄԱՐԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԵՈՐՈՒԹԻՒՆԵՆԵՐ ՀԱՍԱԾ ԵՆ
ՓՈՒԹԱՑԻՔ ՕԳՏՈՒԻԼ

Կ. Պոլսոյ ամենամանօթ Թիֆլիսի Տան Գահիրէի
նորահաստատ Մասնաճիւղն է .

ՔՐԷՏԻ ՖՈՆՏԻՅԷ ԷԺԻԲՍԷՆ

16 Փետրուար 1914

1886 թնը 361րդ վիճակահանութիւն

Ա. ՊԱՐԳԵՆ

Թիֆ 325, 515 կր շահի՝ 50,000 Յրանց

Հետեւեալ 25 թիւերը կը շահին 1000 Յր.

14085 43206 79374 91711 94500

107956 116390 117161 122180

130022 142507 149198 152333

162805 167996 170342 193121

206050 221512 244919 258972

259535 296370 399949 335158

Բ. ՍԷՌԻ

130րդ վիճակահանութիւն

Ա. պարգև 474 773 50,000 Յր.

Հետեւեալ թիւերը կը շահին 1000 Յր.

419097 420730 427469 429517 443271

448343 492710 512193 529796 547950

549640 585054 587864 588675 593931

604593 613853 635906 646564 676391

677843 682136 703992 733012 745722

Գ. ՍԷՌԻ

39րդ վիճակահանութիւն

Ա. պարգև 128776 կր շահի 50,000 Յր.

Թիֆ 257, 399 կր շահի 10,000 Յր.

Հետեւեալ թիւերը կը շահին 1000 Յր.

18023 20016 62672 94045 105478

106336 111191 121922 126804 157748

184248 185256 248326 263755 264920

289078 299092 343363 345289 353115

372246 376101 391660 394874

ՎԻՃԱԿԱՎԱՆՈՒԹԻՒՆ

ԱՂԲԱՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳԱՂԻՐԷՆԻ ՀԱՅՈՑ

— 0 —

THE SINGER MANUFACTURING Co



Շարա-էլ-Մարափի Տալիզ Պրայնի սեփականութեանը մէջ .

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԵՐԻՆԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ
մինչեւ ցարդ 22,000,000 ծախուած է .


400 է աւելի վկայական եւ մեքայներով վարձատրուած, Երաշխատեալ մեքենաներ.

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիպոգրաֆիկայի արտեստանայի մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԹՈՒՐԿԻՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԿՈՒՆԻՔԻՆ ԵՆ ԹԱԳԱՆՈՐԱԿԱՆ ԱՐԿՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն . Բ . ԵՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ ,
ուշադրութիւն դարձնել
իւրաքանչիւր 'եքենայի
վրայ ՍԻՆԿԵՐԻ ՆԵՐԿԱ
յանկանչիմ



Չրի դասեր և նորոգու-
թիւններ , յաճախորդաց
ուշերուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիներու
յւ նորոգութիւն ամեն կարգի
Մեքենայից

Կիւ ՉԱՓ :

ԱՇԽԱՐՀ . ԿՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԸ

ՃԱՇԱՐԱՆ ՎԱՊՊՈՒՐԱԿԱՆ

ՊԱՉԱՐ ՄԻՐՈՒՐ ԹԻՒ 19

ԱԻՆՏԻՍ ՊՈՅԱՃԵԱՆ

Մեր ճաշարանին մէջ կը պատ-
րաստուին Եւրոպական եւ Արիւել-
եան ընտիր կերակուրներ . պան-
դուլտ երիտասարդները եթէ ան-
գամ մը այցելեն մեծապէս գոհ
պիտի մնան մատչելի գիներէն և
սպասակութենէն . 14

Ի . Ա . ԵՐԱՆ

Հրատարակութիւններ

ԱՅՆՄԷԿԱԿԱՆ ԳԻՐԲԵՐ ԱՄԷՆԻՆ ԱԼ

- Բառարան հայերէն-անգլիերէն սակ . 50
- Բառարան անգլիերէն-հայերէն » 75
- Հայ. անգլ. եւ անգլ. հայ միասին տալ . 1 -
- Պատ. գրուցատրութիւն հայ. անգլ » 150
- Գործնական առողջաբանութիւն » 150
- Սեռային առողջաբանութիւն » 125
- Գործն. եւ սեռ. առողջ. միասին » 2 -
- Ժողովրդային երգարան » 2 -
- Երգարան եւ սեռ. առողջ. միասին » 3 -
- Երգ. եւ գործն. առողջ. միասին » 3 -

Հասցէ՝ E. A. YERAN
P. O. BOX 84, Sta. A.
Cambridge, Mass.

ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԳԵՐՉԱԿ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Փոխադրուած է Շարա Ապտ Էլ Ապիզ
Ապտիի Գարագոյին մօտ .

Անոնք որ ճաշակաւոր գօսքիւն մ-
ւենեալու համար զանազան տեղեր գի-
մած ու դժգոհ մնացած են , թող ան-
շամ մը մեր վաճառատունը այցելեն .
պատրաստ եմ իրենց հետ պայմանաւոր-
ուիլ որ՝ եթէ իրենց յանձնարարութիւն
ըն գոհացուցիչ չ'դառնան , կանխաժաբը
ամբողջովին եւ պիտի ստանան .

Այս պայմանը՝ ճաշակաւոր հազ-
ուելու փոփառողներուն համար , նը-
պատասար առիթ մը պիտի ըլլայ .

Ապառիկ սպասարանները նկատու-
ղութեան շին առնուիլ , եւ անոնք որ
ինծի կը դիմեն , զիւրաւ կրնան ըմբռ-
նել ապառիկին տարբերութիւնները ,
Թէ գործի մաքրութեան եւ թէ գի-
ւերու մասին .

1-50 ՄԱՐՏԻՐՈՍ ԹԱԴԵՈՍԵԱՆ

ԾՈՎԱՅԻՆ ԵՒ ԳԱՂԹԱՅԻՆ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Լ. ԵՆՈՎՔԵԱՆ ԵՒ ԸՆԿ .
ԱՂԵՔՍԱՆԻՐԻԱ (Եղիպտոս)

Շորաթական կանոնաւոր երթեւեկ .
Միացեալ Նահանգներու , Գա-
նատայի եւ Հարաւային Ամերիկա-
յի համար .

Գաղթականներու համար չափա-
ւոր գին .

Աչքի քննութիւնը ճիշտաբար
կը կատարուի տեղւոյս մէջ ,
Մանրակազմի տեղեկութեանց
համար դիմել Գործակալութեան .
ՄՕՀԱՄԷՏ ԱԼԻ ՀՐԱՊԵՐԱԿ
Հեռագրական Հասցէ -- ԼԵՆՕՔՕ

Փոսթ արկի թիւ 897
Թուրքիոյ գաւառներու մէջ
փոխ - գործակալներ կը փնտռուին

Արտեստի՝ ԵՂԻՇԷ ԹՈՐՈՍԵԱՆ

Սեփական Տպարան ԱՐՇԱԼՈՅՍ Լրագրոյ

ՏՊԱՐԱՆ

Ա Ր Շ Ա Լ Ո Յ Ս



ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանը՝ Արտեստի Եղիպտական ջախարհային
ներքին Գործոց Նախարարութեան , ամենամեծ խնամքով կը տպագրէ .

- 1 . — Արտեստի Օրաքերքեր , Հանդեսներ , Պրօշիւրներ , Պարբերա-
կաններ եւ մանաւանդ Գիրքեր .
- 2 . — Վաճառականական տեսքեր՝ եւ գրասենեակի ամեն տեսակ տը-
պագրական պիտոյքներ՝ ամեն շեղանով .
- 3 . — Յայտարարութիւններ , շրջաբերականներ , նամակաւերջիւններ ,
Ըագրիւրներ , եւ այլն .
- 4 . — Հարսանեկան տուներ , մահազոյներ եւ այլնատեսեր եւ այլն .

ԱՐՇԱԼՈՅՍ Տպարանին հասցեն է , ց'նոր տնօրինութիւն . Շարա
Մուկանեհ Ալի . Սիրասէջ երկարող քրակիչի գծին վրայ , Հարթ - Էլ
Մասապէկ - Էլ Գասիլե , թիւ 40 . Տիւրքիոյ Գործակալութեան յարչա-
րածնին մէջ .

Վ Ա Ր Չ Ո Ւ